ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Կոտայքի մարզի Եղվարդի ռիոլիտադացիտների հանքավայրի հարավ-արևելյան տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 23.04.2014թ.-ի N29/201 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու արտանետումների մշտադիտարկում,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. արտադրական հրապարակի տարածքի հողերի քիմիական կազմ:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Կոտայքի մարզի Եղվարդի ռիոլիտադացիտների հանքավայրի հարավ-արևելյան «ՆԱԻՐԻԻ ՃՇՇ» ԲԲԸ հատկացված տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՆԱԻՐԻԻ ՃՇՇ» ԲԲԸ
տնօրեն՝

«ՆԱԻՐԻԻ ՃՇՇ» «НАИРИЙСКАЯ ДЭС» 03300284

Ա. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ն-1914
16.02.2026թ.

ք. Եղվարդ, Չարենցի 60
Հեռ. 071-341313
16.02.2026թ

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Միջինացված արդյունքը[1] |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Հանքավայրի տարածք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.042մգ/մ³ |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Քիմիական կազմ | Տարածքի դիտարկում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | Cr 30մգ/կգ, Mn 283մգ/կգ, Co <5մգ/կգ, Ni 49մգ/կգ, Cu 47մգ/կգ, Zn 44մգ/կգ: |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Նախատեսված չէ | | | | |
| Աղմուկ և թրթռում | Նախատեսված չէ | | | | |

[1]Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| | |
|---|---|
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ-ված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում |

Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը ներկայացված են նկար 1-ում

● Մթնոլորտային օդում աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կետ

● Արտադրական հրապարակի տարածքում հողերի մշտադիտարկման կետ




Նկար 1